ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 29-ին, կիրակի.— Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Գևորգ ծ. վրդ. Սերայդարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի Եղիայի» (Մատթ. ԺԷ 4) բնաբանով:

*
* *

Հուլիսի 30-ին, երկուշաբթի.—Բ օր Վարդավառի:

[illegible] ս. պատարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էլչուճյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն հանգուցելոց»:

*
* *

Օգոստոսի 3-ին, ուրբաթ.—Այսօր Մայր Աթոռի միաբանությունը ուխտի է մեկնում դեպի Դիլիջան՝ Հաղարծնի վանքը:

*
* *

Օգոստոսի 5-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վարդավառի:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

*
* *

Օգոստոսի 12-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում խաղողօրհնության կարգը և ընթերցվում ս. Ներսես Շնորհալու «Աղօթք խաղողօրհնութեան»-ը:

*
* *

Օգոստոսի 13-ին, երկուշաբթի.—Բ օր Վերափոխման:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն «վասն հանգուցելոց»:

*
* *

Օգոստոսի 19-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Վերափոխման:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը:

*
* *

Օգոստոսի 21-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ վերադարձավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Կիսլովոդսկի «Կրասնի կամեն» առողջավայրից, ուր հանգըստանում էր տ. Կոմիտաս արք. Տեր-Ստեփանյանի հետ:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի միաբանները, գլխավորությամբ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորում է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ ընկ. Ս. Գասպարյանը: